

ԵՐՈՒԽԱՆԻ «ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ» ԱՆԱՎԱՐՏ ՎԵՊԸ

1894-96թթ. պատմական աղետալի դեպքերից հետո ձևավորվում և սկզբնավորվում է նոր ու բացառիկ հոգեբանական գրականություն, որ բնկված էր խոր անձնական ցավով ժողովրդի ողբերգության, քաղաքական դրամայի հանդեպ:

Իր ստեղծագործություններով՝ «Մեզատժին», «Պստիկ Սեփին պատմությունը», «Կուզը» և այլն, Երովսանը շատ չափով շարունակում և խորացնում էր 19-րդ դարի 80-ականների ռեալիստական գրական շարժմանը բնորոշ իրողությունները, սակայն մի բանում էականորեն տարբերվում էր գրեթե բոլոր ժամանակակիցներից: Նա առաջիններից մեկն էր, թերևս նաև եզակին, որ նկատեց 1894-96թթ. ջարդերի հոգեբանական ազդեցությունը հայ մարդու ներաշխարհի վրա, նաև այն, որ ջարդերին հաջորդող տարիներին հայ մարդը արդեն նոր հոգեկերտվածքի կրողն էր: Վկան՝ «Գաղթականները» անավարտ վեպն է, նաև այն հոդվածները, որոնցով հանդես էր գալիս Երովսանը «Ծավիղ» համդեսում, որի հիմնադիր խմբագիրներից մեկը հենց ինքն էր:

1896թ-ին, երբ կոտորած տեսած գրողը մեկնեց Բուլղարիա (հաստատվելով Վառնա քաղաքում), չհուսահատվեց: Ամենազոր ժամանակը պահանջում էր սթափ դատել: Օտար երկնքի տակ տեսնելով քաղաքակրթության ձգտող ազգերին, նրանց նախանձելի ազատ կամքն ու կյանքը՝ գրողը ցավում էր իր ազգի ստրկական վիճակի ու խեղճության համար: Դրան ավելանում էին նաև դժվարին օրերի ծանր տպավորությունները: Այս քառսային խառնաշփոթի մեջ անտարբերության էին մատնվել հայ գաղթականները: Խնդիր էր առաջանում ջարդերից փրկվելու համար պանդխտության կորստաբեր ժամփաները բռնած գաղթականության պահպանման ուղիները գտնել, քանի որ այս նոր գաղթականությունը էապես տարբերվում էր նախկին խաղաղ օրերի պանդխտությունից: Գրողը գիտակցում էր, որ սա էլ է յուրօրինակ կոտորած. գաղթականությունը ավերակված հոգիների ամբողջությունն էր, որ օտարի հողի վրա կրկին կանգնած է բնաջնջման եզրին: Այս դաժան

իրականության համար նա մեղադրում և դատապարտում էր սուլթան Աբդուլ Համիդին, ինչպես նաև եվրոպական տերությունների վարած երկդիմի քաղաքականությանը:

Անհանգիստ ու զգայուն հոգին սկսում է տենդորեն ելք փնտրել իր ուղեկորույս ժողովրդի համար, հանդես գալ ազգային հոգեբանության ամբողջացման գաղափարախոսությամբ, հոգեկերտվածքի ու դիմագծի պահպանման կոչերով՝ վերջնական կործանումից, ուժացումից փրկելու համար: Այս մտահոգությունները տարիների փորձառության հետ կուտակվում, ապա շիկանում և իրենց բարձրակետին են հասնում մասնավորապես «Ծավիղ» հանդեսում (իսկ մինչ այդ «Բիզանդիոն» թերթում), որ աչքի ընկավ հայապահպանության ուրույն գաղափարախոսությամբ ու ծրագրերով: «Ծավիղ» հանդեսի անվանումը ինքնին արդեն խորհրդանշական էր. այն շավիղ՝ լույսի ծամփա մատնանշող էր: Ծանրախոհ և իրատես գրողը ավերումի դառնությունը սրտում քարոզում է Լույսի ծանապարհը: Հենց սկզբում խմբագրությունը հանդես է գալիս համերաշխության և փոխադարձ հարգանքի կոչով, որ հիմքեր պիտի դնե՝ զալիքի համար: Պատահական չէ, որ հանդեսը սկսվում է Երովսանի խոսում հոդվածով՝ «Հայությունը արտասահմանի մեջ»: Այն ոչ միայն գրողի մտահոգությունների և նպատակների վկայությունն էր, այլև հայապահպանության յուրօրինակ ծրագիր¹:

Գրողը կարևորում և մեծ ուշադրություն է դարձնում եկեղեցու, մամուլի և դպրոցի հայապահպան դերին ու նշանակությանը, ցույց տալիս նրանց պարտականությունները հայրենիքի ու ժողովրդի հանդեպ: Այս երեք կարևոր կռիվները կոտորածից մազապուրծ եղած հայի հոգու միակ նեցուկն են օտար երկնքի տակ: Ի տարբերություն հայ քաղաքական կյանքի առաջնորդների կորստաբեր անտարբերության՝ եկեղեցին ու մամուլը անտարբեր չեն հայի ցավի նկատմամբ: Նույնիսկ գեղարվեստականացման է հասնում եկեղեցու «սրտացավությունը». եթե մի ժամանակ նա պանդուխտի նեցուկն էր, ապա այժմ՝ կոտորածից՝ փրկված պանդուխտի. «... երբ հայ գաղթականութիւնը, կոտորածներու անմոռանալի թուականին, արտասահման նետուեցավ շնչասպառ, հոն կանգուն գտավ դեռ հայ խորանը՝ սգաւոր մենակեացի մը պէս (այս և հետագա ընդգծումներն իմն են - Ն.Ս.), որ իր կորսուած զաւկներուն կսկիծովը կը զփայ արցունքոտ ու կորագլուխ համակամութեամբ մը»²:

¹ Այս առումով, թեև իրապարակախոսությամբ, բայց գաղափարի մեջ Երովսանը նախորդում է առանց երգի մահանջը ահազանգողին՝ Ծահնուրին:

² Տես Երովսան, Արտասահմանի հայ եկեղեցին, «Ծավիղ», Վառնա, № 3, էջ 34: Այսուհետև բոլոր մեջբերումները կարվեն սույն հանդեսից՝ էջը նշելով շարադրանքի մեջ:

Վերոնշյալ երեք հոդվածների համար ընդհանրականն այն է, որ գրողը կոչ է անում զգաստանալ, հաղթահարել հուսահատությունն ու վիշտը: Հրապարակախոս Երովսանը դիպուկ նկատառումներով է ներկայանում. նրանք պետք է օգուտ քաղեն դրսում ընձեռված հնարավորություններից՝ ի նպաստ իրենց: Ի տարբերություն Պոլսի՝ այստեղի հայությունը, եկեղեցին ու մամուլը ազատության մեջ են, որոնց չի սահմանափակում օտար բռնակալը:

Դրսի իրականության մեծ տպավորությունների տակ Երովսանը կարևորում է հայապահպանության մի էական գիծ ևս՝ ազգային բարոյականի պահպանումը, որը գաղթականության համար կարող էր փրկության ուղի դառնալ: Գրողը կարևորում է նրա նուրբ առանձնահատկությունները, «ռազմավարությունը»: Այս առումով առանձնանում է «Արտասահմանի հայության բարոյականը» հոդվածը, ուր գրողը չի անտեսում բարոյականության և՛ դերը, և՛ առավելությունները՝ իբրև գոյության հզոր խթաններից մեկի: Զե՞ որ բարոյականության մեջ են ի հայտ գալիս հայկական հոգեկերտվածքի յուրահատկությունները, որով առնչվում են մեծ աշխարհի հետ: Եվ սրա պահպանումը հիմք կարող էր լինել աշխարհի համակրանքը շահելու և դրանում ազգային բախտորոշ հարցերը հօգուտ մեզ լուծելու. «նիթական ուժ է բացարձակապէս ձեռնթափ, ապրելու գոյութիւնը շարունակելու մի միակ պատուանդան մը ունի, - իր բարոյական համբաւը: ... Ազատութեան փողփողուն իտէալովը տառապող ազգ մըն ալ, որպեսին է մերը, այս ճշմարտութեան հետեւելուն մէջ միայն կրնայ իր ձգտումներուն բուն հանգոյցին լուծումը գտնել» (49):

Հենց վերոնշյալ հոդվածները գեղարվեստական հիմք դարձան «Գաղթականները» վեպի հղացման համար: Սրանք «Եսվիղ»-ի այն ինքնատիպ հոդվածներից էին, որոնք իրենց ժամանակի արդիական հարցադրումներով ու արծարծված խնդիրներով ներքին շարժում ու լիցք տվեցին վեպին: Հրապարակախոսության՝ իբրև ժանրի սահմանափակությունը թույլ չէր տալիս խորը պատկերելու ջարդերի հոգեբանական հետևանքների գեղարվեստական դրսևորումները: Եթե հոդվածներում ընդհանուր գծերով է խոսվում նոր իրականության մասին, ապա վեպում գրողը ծանրանում է դրանց գեղարվեստական մասնավորեցման վրա. և՛ խնդիրների, և՛ նոր հոգեբանության արդյունքում ձևավորվող հոգեկերտվածքի վրա: Մյուս կողմից գաղթականության թեմայով նովելներն էլ ունեցան իրենց որոշիչ նշանակությունն ու ազդեցությունը: Նկատենք՝ Երովսանի համակրանքն ու հետաքրքրությունը գաղթականների հոգեբանության նկատմամբ ի հայտ է գալիս դեռ վեպը գրելուց առաջ՝ «Կեվերեքին» նորավեպում, ուր նորավիպագիրը խոստովանում է իր հակման մասին. «Թշվառություն իր չարչարելու հատկությունն զատ՝ սա հանգամանքն ալ ունի, որ մարդուն նկարագ-

րին տեսակ մը շեշտ, տեսակ մը թափ կուտա: Երևան կելնե ան իր ճշգրիտ գծերուն մեջ, կեղծիք, ծեքծեքանք կանհետին: Այս է պատճառը, որ հոս ներկայացած տիպարներն ավելի հետաքրքրական, ավելի ուշագրավ են»¹:

Կարծում ենք, գաղթականության թեմայի ընտրության շարժառիթը նաև այն է, որ Երուխանին հետաքրքրել է հայ մարդը իբրև գաղթական, ոչ իբրև աշխարհաքաղաքացի, այլև մարդ, որ կորուստներ կրածի հոգեբանությամբ է ներկայանում աշխարհին, որի դեպքում Երուխանն առաջնահերթ կարևորում է աշխատասիրության ոգին:

«Գաղթականները» վեպը տպվեց «Շավիղ»-ի (1900թ., հոկտեմբեր 15) 15-րդ համարի մեջ: Դա պայմանավորված էր հանդեսի թեմատիկ - գաղափարական առանձնահատկություններով: Ինչպես վերը նշվեց, պայմանավորված նաև հողվածների և նովելների տրամաբանական ընթացքով: Գրականագիտության մեջ գրեթե ոչ մի մեկնություն չկա՝ այս, մեր կարծիքով խոստումնալից վեպի մասին (պատճառը, թերևս, վեպի անավարտությունն է, որ թույլ չի տալիս համարձակ, ավարտուն դիտարկումներ անելու): Միայն Լ. Ստեփանյանն է անդրադարձել «Գաղթականները» անավարտ վեպին², որը մեզ սպառիչ չթվաց, այդ պատճառով հարցը քննում ենք այլ շրջանակներում, այլ մոտեցմամբ: Ճշմարիտն այն է, որ առանց գրողի հրապարակախոսության և նովելների, իսկապես դժվար, եթե չասենք անհնարին կլիներ նկատել վեպում հղացված նուրբ հարցադրումները: Եվ որովհետև վեպը գրեթե անծանոթ է ընթերցող հասարակայնությանը, հարկ ենք համարում համառոտ ներկայացնել դիպաշարը:

1896թ-ից հետո հայ գաղթականությունը հաստատվում է Բուլղարիայում, մասնավորապես՝ Վառնա քաղաքում: Սովահար ժողովրդին նպաստ է տրամադրվում, որի վարիչն էր օրիորդ Ֆրեյզերը: Ղուկաս անունով մի մարդ, որը Պոլսում քահանա էր եղել, աշխատում է օրիորդ Ֆրեյզերի մոտ՝ անխղճորեն յուրացնելով հայ գաղթականների նպաստը: Գառնիկը, որը նույնպես գաղթել էր Պոլսից, Վառնայում աչքի է ընկնում իր ծարպկությամբ (ինչպես Պոլսում) ու խորամանկությամբ: Նա Բերուզ անունով մի կնոջ հետ գործարքի մեջ է մտնում՝ գաղթականներին քննիչ Ղուկասի դեմ հրահրելու, նրան վախեցնելու և այդպիսով նպաստից իրեն բաժին հանելու համար:

Վեպի հենց սկզբում հեղինակը ներկայացնում է հիմնախնդիրը՝ գաղթականների խեղճությունը և ֆիզիկապես ու հոգեբանորեն ցուրտ

¹ Տե՛ս Երուխան, Նովելներ, Եր., 1965թ., էջ 248:

² Այս մասին մանրամասն տե՛ս Լ. Ստեփանյան, Երուխան. Կյանքը և ստեղծագործությունը, Եր., 2007:

աշխարհի դաժան սառնությունը. «Դեկտեմբերի սառն ու ուժգնաբախ քամին արդեն իսկ դող տալ սկսած էր հազարաւոր հայ գաղթականներուն, որոնք Վառնա նետուած էին այն անխորհուրդ ու խառնիխուռն գահավիժմամբ, որով ոչխարներու հօտ մը կը խուժե իր մակադատեղին» (234-235): Նրանք արդեն բախվել են աշխարհի ու մարդու եղբրական անտարբերութեանը, գաղթել՝ զարհուրած հոգով. «Հայերը ծակամուտ եղած էին, ցրտահար ու արհաւիրքով լեցուն» (235): Ամեն մեկը յուրովի էր փնտրում գոյատեւելու ուղիները: Ոմանք հիվանդանոց, ոմանք մութ ու խոնավ անկյուններ, ոմանք էլ՝ գինետուն: Այս վերջինը դարձել էր ցավը խեղդելու յուրօրինակ վայր: Պատահական չէ, որ վեպի հերոսներից մեկի՝ Գառնիկի շուրթերից հնչում է ոչ միայն ֆիզիկական ու հոգեկան տանջանքի, այլև գրողի փիլիսոփայական խորհրդածությունը հայի անխուսափելի ժակատագրի շուրջ. «Ատամ, ըլլալիքը կըլլայ» (235): Այս կործանարար հաշտվողականությունը դարձել է փիլիսոփայություն՝ մշտապես ուղեկցելով բախտի զոհերին: Միայն այստեղ է գրողը կարեկցում Գառնիկին՝ իբրև կոտորածի դաժան հետևանքը կրողի:

Ուշագրավ է, որ Երուխանը տարբերում է անհատ գաղթականին հավաքական գաղթականությունից: Գառնիկը բոլոր գաղթականների պես տառապող հոգի է. «բայց նա առանձին վերցրած յուրօրինակ տեսակ է, որ նաև տիպական է գաղթականության մեջ: Նրա համար կոտորածը նոր բախտի հնարավորություն էր. «Հազարաւոր գաղթականներէն մէկն էր ինքն ալ, խեղժ, բախտախնդիր, ապրելու համար ամէն բան ալիք առած, Պոլիսը ձգած՝ չէ թէ կոտորածէ կամ բանտարկութենէ վախում, պարզապէս որովհետեւ ամէն մարդ ձգել փախչելու վրայ էր, այդ աղմկալից խառնակութեան մէջ ինք, յանդուգն, ճարպիկ ու անխղճահար, անշուշտ պիտի կրնար բախտ մը ձեռք ձգել: Իր նպատակին հասնելու համար ուներ բոլոր պահանջուած յատկութիւնները» (237): Նա շահին հարմարվող մարդու տեսակ է: Պոլսում և նրա հարակից շրջաններում որսացել էր տեղային բարքերն ու հոգեբանությունը և դրանց համապատասխան՝ կերպարանափոխվել: Գառնիկը հեռանկարի մարդ էր. «Երբ որ Գառնիկ շոգենաւ մտած էր Պոլկարիա գալու համար, ճոխ ծրագիրներու երամով մը խռնուած էր իր միտքը. շահագործութեան կոյս հող մըն էր Պոլկարիան, ուր ինք գրեթէ անծանօթ մըն էր» (237-238): Նուրբ է Երուխանը, քիչ-քիչ բացահայտում է կերպարի հոգեբանությունն ու հոգեկերտվածքը. նա չի շփոթվում սոսկ արտաքին նկարագրությունից՝ սահմանափակվելով այդքանով: Այլ էր նրան հետաքրքրողը. նա փնտրում էր Գառնիկին բաժին հասած դժբախտ ժակատագրի անդրադարձները նրա իսկ հոգու ծալքերում, հեռավոր ու աննկատ խորքերում: Ճիշտ է, Պոլսում նրա արարքները խաբեբայու-

թյուններ են (հայտնի էր իբրև փաստաբան), բայց Վառնայում դրանք այլ երանգ են ստացել, որ չի նկատում անգամ ինքը՝ կերպարը: Թեև գործելաժողը նույնն է մնացել, բայց էության մեջ ինչ-որ բան փոխվել է: Այդ արարքները կարծես ներքին թերարժեքությունից ազատվելու, ներսի դառնությունը հաղթահարելու ագրեսիվ դրսևորումներ են՝ ինքնափրկության մշանակություն ունեցող. «Ու Գառնիկը կը խմէր ու կը ծխէր տեսակ մը **անգփտակից հեշտախտութեամբ, անուշ հեռապատկերներու ծխանքին մէջ գրեթէ մոռացած իր վիճակին կսկծալի դառնութիւնը** այդ հաճոյալի **ինքնամոռացումը անհունապէս երկարելու կամէութեամբ մը**» (238): Գառնիկը նույնիսկ գաղթականության մեջ ինքնադրսևորվելու «տաղանդ» ուներ, որ կարող էր օգտագործել՝ ի նպաստ գաղթականների: Բայց նա դեռ չի հասել ես-ը ազգայինին միահյուսելու բարձր գաղափարին: Ցավալին, հենց այս անտարբերությունն է, որ աղետալի է ժողովրդի համար: Սա այն է, ինչի մասին գրողը մտահոգվում էր հողավճաններում: Սակայն հետաքրքիր մի երևույթ է տեղի ունենում. Գառնիկը դրսի առավելությունները օգտագործում է ոչ թե հանուն գաղթական ժողովրդի, այլ նրա դեմ: Բայց անընդհատ տանջում է նրան խիղճը: Գառնիկի համար արտասովոր է հոգեկան այս նոր զգացողությունը. նա մեղսագփտակ է: Եվ ինչքան էլ փորձում է վանել, հաղթահարել արհավիրքի, գաղթական ժողովրդի տառապանքի ազդեցությունը՝ գտնելու ներքին ազատությունը, ուր պիտի գործի միտքն ու հոգին, այնուամենայնիվ, շփոթված է, դեռ վարանում է իր շահադիտական նպատակները տառապալ ժողովրդի ցավերի հաշվին իրագործել. «Ստիկ կ'ըներ անլի իր գանկին տակ **վժվճացող խառնաշփոթ մտածմունքը**՝ վրդողված սառնաշունչ քամիէն, մանաւանդ այն **տարօրինակ կացութենէն**, ուր ինք կը գտնուէր գաղթականութեան տաժանագին կեանքը սկսելէն ի վեր» (252): Բայց Գառնիկը ինչքան էլ երերա, նրա ընթացքը հոգու դարձի ընթացք չէ: Ուշագրավ է, որ գրողը հակադրում է Գառնիկի աշխույժ գործունեությունն ու գաղթականների անգործությունը. նրանք քնում են փողոցներում՝ «խաբուսիկ երջանկութեան մը անստոյգ ապագայի մը տարտամութեանը մէջ անզգայացած»՝ փոխանակ աշխատելու: Բայց դա էլ ուներ իր պատճառը. դժբախտ ծակատագիրը ծարահատ, խեղճ ու անգործունյա էր դարձրել հայ գաղթականի աշխատասեր ոգին, մի տեսակ բթացրել իրականությանը հաղորդակից լինելու կարողությունը, դարձրել երազուն: Նրանք հույսը դրել են նպաստի՝ երկրային ողորմության վրա: Հայ միտքն ու հոգին դարձել էր ողորմասեր, նկուն ու հուսահատ: Դեռ «Կեվրեքժին» նորավեպում Երովսանը խոսում էր նպաստի «նպաստավոր վտանգների» մասին: «Գաղթականութիւնը նպաստավորվելու տենդեն բռնված, խղաղկան թափով կլինար իրեն երկարված հացին վրա ... Նպաստը մեկ կողմեն անոթություն կսպե-

ղաներ, մյուս կողմե, անուղղակի ազդեցությամբ մը, **գործունեության ոգին** կշլատեր, աշխատության կրակը կմարեր գաղթականներուն սրտին մեջ»¹:

Ողորմասեր, ասել է՝ մուրացկանությանը հակված ու նրա հետ հաշտ գաղթականությունը բողոքի է դուրս գալիս այդ ողորմելի վիճակը պահելու համար: Այդ բողոքը, որը հրահրել էին Գառնիկն ու Բերուզը, ուղղված էր և՛ օրիորդ Ֆրեյզերի, և՛ քննիչ Ղուկասի դեմ: Ղուկասը գաղթականների պատուհասն էր՝ տառապանքն ու աղքատությունը արհամարհող, իսկ իբրև հոգևորական՝ հայի ցավին անտարբեր. «Չհաւատալով, որ անոնք ջարդէ ու կողոպտուէ իսկապէս խոյս տուած խեղճեր էին» (254): Նա իր պաշտոնը առանց խղճմտանքի էր գործադրում: Իսկ գաղթահայությունը իր հերթին անգգոյշ էր ու միամիտ, չուներ նուրբ ռազմավարություն, որն այնքան պակասում էր, և որի համար այնքան անհանգիստ էր գրողը, նրանք չէին հասկանում, որ ցույցը վտանգավոր կարող էր լինել՝ «նպաստին յանկարծակի ընդհատմամբ»:

Երուխանը մեծ տեղ է հատկացնում Ղուկաս աղայի կերպարի քննությանը. «Ղուկաս աղա այն հագուագիւտ տիպարներէն էր, որոնք ընկերութեան մէջ կը պտըտցունեն տգիտութեան, խորամանկութեան, կեղծիքի ու քծիքի ընթացիկ բարոյականը, գերադրական աստիճանով մը» (270): Եթե Գառնիկի խորամանկության նկատմամբ ինչ-որ տեղ ներողամիտ է հեղինակը, ապա Ղուկաս աղայի նկատմամբ խիստ է և չներող: Ղուկաս աղան իբր լուսավորչական է եղել, բայց տեսնելով, որ այն հաց չի բերում, ընտրում է բողոքական դավանանքի «շահավոր ասպարեզը»՝ նորանոր շահերի ակնկալությամբ: Եվ եթե Գառնիկը կերպարն է փոխում, ապա Ղուկասը՝ հոգին: Գրողը հեզնում է նրան, թե՛ «Տէրոջը խոսքը» ասելով, Պոլսի մեջ Սուրբ Գրքի հատորներն էր վաճառում դրամ վաստակելու: Նա նույնիսկ լսարան ուներ. «ռամիկ դաւանափոխներու մութ ու մզլոտ խաւերուն մէջ, ողորմելի գանկեր, միամիտ ու պարապ հոգիներ գտած էր զինքը ունկնդրելու մշտապատրաստ» (271): «Տէրոջ խոսքը» չհասկացողը բնականաբար պետք է միամիտ մարդկանց համար խեղաթյուրված մեկնաբաներ խոսքի խորհուրդը: Այս կերպարը ինչ-որ չափով հիշեցնում է Մարտիրոս աղային («Չաջողության գաղտնիքը»): Եթե Գառնիկի վրա կոտորածը ազդում էր ենթագիտակցորեն, ապա Ղուկասի դեպքում թվում է՝ չնչին է դրա ազդեցությունը: Ընդհակառակը, շատ է ու ողբերգական: Ուշագրավ բան կա այստեղ: Երուխանը նրբորեն բացում է մի ուրիշ իրողություն: Եթե քահանան մեզ ներկայանում է շահասեր մի մարդ, որ կտրվել է երկնքի ծանապարհից,

¹ Երուխան, Նովելներ, Եր., 1965, էջ 250-251:

ապա, կարծում ենք, այդ ինչ-որ տեղ ուներ իր դրդապատճառները: Բախտը և աղետը ստիպել էին նրան անհաստատ ու թույլ լինել հավատի մեջ և Սուրբ Գիրքն այլ տեսանկյունից դիտել: Աղետի աղետալի հետևանքն այն է, որ հայ քահանան վերածվում է հավատավոր շահասերի: Հոգու մարդը դառնում է նյութի նվիրյալ. «... առաջին անգամ ըլլալով դառնութիւնն ունեցավ հասկնալու թէ Ս. Գիրքը եւ անոր միջոցով իր յայտարարած խեղկատակութիւնները փոր չէին կշտացներ» (285-286): Եվ ինչպես քահանան անտարբերության է մատնում Աստծուն, այդ օրերի միակ պաշտպանին, այնպես էլ հոտը պիտի վարվի. նա կորցրել էր իր Հովվին: Իսկ հավատին չապավինողը միշտ էլ մարմնապես է մաքառելու. «Բոլոր հոգեւոր բաներուն առժամեայ դադարին շրջանն էր: Հայերը, պահ մը երկնքէն անջատուած, երկրային, մարմնական փրկութեան մեծ շունչովը կը հեւային» (286):

Հավատի աղետավոր նահանջը, մանավանդ հոգևոր առաջնորդին ներելի չէ: Սա երովսանը արծածում էր դեռ «Եկեղեցականությունը արտասահմանի մեջ» հոդվածում («Ծավիղ»): Այս հոդվածը կարևոր ենք համարում այնքանով, որքանով որ այն օգնում է հասկանալու կերպարը, նրա բացահայտմանը: Այստեղ գրողը զայրացած է եկեղեցականների դեմ, որ իբրև թույլ և վեհերոտ հովիվներ չկարողացան պաշտպանել փախչող հոտին և՛ ներսում, և՛ դրսում: Իսկ արտասահմանի մեկ - երկու վարդապետներն էլ իրենց հոտի ետևից գնացին ոչ թե պաշտպանելու նրան, այլ միևնույն ջարդերի սարսափից, թեև ամենաքիչը նրանք էին ազդվել դրանից. այլ էր նրանց հետաքրքրողը. «... շահադիտութեան թագուն նպատակներ քշած նետած էին զանոնք փախստականներուն մէջ» (145): Նրանք չեն մխիթարում վիատված հոգիներին: Այդ պատճառով էլ ժողովուրդը անվստահորեն է վերաբերվում կրոնական առաջնորդներին (ինչը տեսնում ենք վեպում), որ աղետի պահին ճանապարհ չուղենշեցին, սատար չկանգնեցին իրենց: Ընհակառակը՝ բարդացրին իրավիճակը (մանավանդ արտասահմանում). «... կատարեալ անմիաբանութեան, երկպառակութեան ու անհամերաշխութեան տխուր վիճակ մը, բոլորովին հակառակը անոր զոր արդար էր ակնկալել ժողովուրդի կրօնական առաջնորդի մը ներկայութենէն» (147): Ըստ երուխանի՝ այլ կիներ գաղթականների բախտը, եթե կրոնավորը լիներ նրանց Ծավիղի տերը: Եվ փոխանակ բարոյական ծարավը գոհացնող գաղափարների, հոգևոր խոսքի, որին կարոտ էին տագնապած գաղթականները, կրոնական առաջնորդները ներկայանում են դատարկ ու սին քարոզներով, անհասկանալի խրատներով: Իսկ սա կարող էր եղերական լինել ջարդերից փրկված ազգի գոյության ու նրա ներդաշնակության համար: Ահա հոդվածում արծարծված այս խնդիրները վեպում գեղարվեստական մարմնավորմամբ ներկայացվում է Ղուկաս աղայի

կերպարով: Նա գաղթականության մեջ փոխանակ ստանձնելու փրկչի դերը՝ քննիչի դերը ստանձնեց. «Կարծես հարցաքննիչ դատատու մըն էր, որ պաշտօն ստանձնած ըլլար հայ գաղթականութեան մէջէն լանցատրները մատնանիշ ընելու» (254): Փոխանակ օգնելու՝ դժբախտացնում է բախտից հալածվածներին: Սրան ի պատասխան՝ չի ուշանում հայ կնոջ հավիտենական մորմոքը. «...հայուն բախտը ո՞ր տեղ պաց է քի» (254):

Ղուկաս աղան չի կարողանում օգտվել դրսի ընձեռած հնարավորությունից՝ ի շահ իր ժողովրդին: Նա միայն մտածում է սեփական շահերի մասին: Ուշագրավ է, որ գրողը առանձնակի ուշադրություն է դարձնում նաև այն երևույթին, թե ինչպես է Ղուկաս աղան ընկալում ժողովրդական հեղափոխությունը (այս խնդիրը արծածվում է նաև «Եկեղեցականությունը արտասահմանի մեջ» հոդվածում). «Տղաքս, ատ յեղափոխութիւն ըսուած բանը մեզի ամենեւին յարմար չէ. Ս. Գիրքը ծայրէ ծայր կարդացէք, նայեցէք ատանկ բան մը կա՞յ...» (286): Անթաքույց է գրողի զայրույթը այս պահպանողականության հանդեպ. նա կողմ է հեղափոխությանը և չի համարում բախտախնդրությունը:

Այս երկու կերպարների մեջ իր գեղեցիկ հոգու հատկանիշներով առանձնանում է օրիորդ Ֆրեյզերը, որ հաճախ է հանդես գալիս Երուսաղիմի՝ տարագրության թեմայով նովելներում («Օղորմություն մը», «Սայլորդը» և այլն): Հիացած է նրա բարությանը Երուսաղիմում. «Քաղցրութիւն, հեզութիւն, բարութիւն, մարդկային տառապանքներու համար խորունկ արգահատանքով մը միացած, անոր դէմքին վրայ ջահ մը կ'յօրինէին... Հզօր աղջիկ, որ մէկ ակնարկով կ'զսպէր սովալլուկ ամբոխի մը բոլոր կիրքը»¹:

Քաղցր ժպիտով, անմեղ ու ներողամիտ հոգով օրիորդը նեղյալ հայ գաղթականներին ներկայանում է իբրև Աստվածամայր. «...անոր զուարթ, երջանիկ նայուածքին առջեւ, ուսկից խորունկ ներողամտութիւն մը կը կաթէր, շուարած, ափիբերան կը մնային, մոռնալով մինչեւ իսկ քննիչ Ղուկասը» (269): Նա համատարած խավարում միակ լույսն էր, որ ուղարկվել էր երկնքից՝ հայ գաղթականներին դարմանելու: Մինչև նրա հայտնվելը այլ էր ամբոխի կարծիքը օրիորդի մասին. նրա մեջ բաժին ընկած բախտի մեղավորին էին փնտրում. «Ան չըլթիկը ի՞նչ հախով մեր բաբաները մեզի չիտար կոր տէ անոր ասոր պողազը կը նետէ կոր...» (255): Օրիորդ Ֆրեյզերը ներողամիտ է նույնիսկ քննիչ Ղուկասի նկատմամբ: Այս իրական նախատիպ ունեցող կերպարին Երուսաղիմ հակադրում է քննիչ Ղուկասի և Գառնիկի կերպարներին: Նա իր կարեկ-

¹ Տե՛ս Երուսաղիմ, Կաղանդը գաղթականութեան մեջ, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 1898թ., № 361:

ցանքով ու բարությանը, ինչպես իրական Աստվածամայր, մխիթարում և ապրեցնում է խեղճության ու կարիքի մեջ գտնվող գաղթականների սառած ու ցրտոտ, խեղաթյուրված հոգիները, ընդդիմանում անխիղճ ու անտարբեր աշխարհին: Սա ճշմարիտ հոգու ընթացք էր, որ անհրաժեշտ էր նոր ժամանակների գաղթական հային, մարդուն:

Վեպն ավարտվում է քննիչ Ղուկասի խոստումով: Հետագա համարներում («Ծավիղ»-ի) չկա վեպի շարունակությունը:

Կարծում եմ՝ վեպից առաջ և նրան ուղեկցող հզոր էպիկականությամբ աչքի ընկնող հոդվածները («Հորեյլանի առթիվ», «61-րդ հոդվածը», «Օսմանյան սահմանադրությունը» և այլն) կանխորոշեցին վեպի «ուղին»՝ այլ կերպ՝ և՛ խթանեցին վեպը, և՛ դարձան անավարտության պատճառը: 1894-96թթ. դեպքերի քննությունն ու դիպուկ մեկնաբանությունները, հայ ժողովրդի հետագա ծակատագիրը ուղղակի կլանել էին Երովսանին: Ճշմարիտ գրողին բնորոշ ազգային տագնապը՝ մասնավորապես երիտթուրքերի՝ վերահաս հայաջինջ ծրագրերի նկատմամբ, մարեցին վեպը գրելու թափը, շեղեցին ուշադրությունը, կենտրոնացումը: Ժամանակի տրամաբանությունը, խնդիրների հրատապ լուծումը փոխում էին գրողի տրամադրությունն ու տրամադրվածությունը, պահանջում գրչի այլ դրսևորումներ: Գրողը զգացել էր վերահաս արյան հոտը, դարձել արտասովոր կանխազգաց: Տարիների հեռավորությունից զարմացնում են նրա բացառիկ կանխատեսումներն ու կանխազգացումները: Նա ծանաչում էր բարբարոսի հոգին և իր ժողովրդի համար փնտրում էր գալիքի անհնարին թվացող արշալույսները:

Ցավն այն է, որ գաղթականության մեջ ազգային անքիժ նկարագրի քայքայումն ու բարոյական հզոր հատկանիշների անհետանալը համաճարակի պես ընդլայնվելու հատկություն ունեն: Սա հստակ գիտեր Երովսանը, բայց, այնուամենայնիվ, առաջարկեց համերաշխության, միաբանության և հայապահպանության իր դեղատոմսը, որ տանում էր փրկության և հարատևության: Գաղթականությունն իբրև իրողություն, մի յուրօրինակ կոտորած էր, ու, չնայած այդ գիտակցությանը, Երովսանը ցույց տվեց, մատնանշեց գաղթականների միակ շավիղը՝ Լուսի ծանապարհը: